ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ «ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՑ»-Ի

Նունե Զոմարդյան
ԵՄՀ իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ, միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի պատասխանատու

Հոդվածում վերլուծված են «Որոգայթ փառաց»-ում ամրագրված այն նորմերը, որոնք ուղղված են ռազմական գործողությունների ընթացքում շարքից դուրս եկած զինորականների պաշտպանությանը և կոչված են խնայել ռազմական գործողություններին չմասնակցող անձանց: Հանդես գալով բնական իրավունքի հայեցակարգային դիրքերից՝ Շ.Շահամիրյանն իր տեսությունը ծառայեցնում է ոչ միայն ներպետական, այլ նաև արտաքին հարաբերությունների, մասնավորապես՝ այլ երկրների հետ ռազմական գործողություններ վարելու հարցերի կանոնակարգմանը:

Հիմնաբառեր. բնական իրավունք, միջազգային մարդասիրական իրավունք, ռազմագերի, կյանքի իրավունք, խտրականության արգելում, զինվորներ, խաղաղ բնակչություն:

Հանդիսանալով մարդկության դեմ ուղղված վատթարագույն չարիքներից՝ պատերազմները խլում են հազարավոր մարդկանց կյանքեր, ենթարկում նրանց բազում տանջանքների ու տառապանքների, պատճառում ավերածություններ: Չնայած մարդկության գործադրած ջանքերին՝ ժամանակակից աշխարհում պատերազմները դեռևս շարունակում են հանդես գալ որպես տարաձայնությունների լուծման ծայրահեղ միջոց: XX-րդ հազարամյակի վերջին տարիների կոնֆլիկտների իրական վիճակագրությունը փաստում է, որ այդ ընթացքում աշխարհում տարեկան տեղի էին ունենում 30-ից ավելի զինված ընդհարումներ[1]: Իրավիճակն արմատական փոփո-

1 Տես Усиков А.В., Яременко В.А. Анатомия «малых войн» // Независимое военное обозрение. – 1998. –

խություններ չի կրել նաև XXI-րդ դարում: Ըստ «Ինտեգրված տարածա-շրջանային տեղեկատվական ցանցեր գործակալության» տվյալների՝ ներ-կայումս ավերիչ ռազմական կոնֆլիկտներ են ընթանում աշխարհի մոտ 40 կետերում[1]: Եվ քանի դեռ պատերազմներն արմատախիլ չեն արվել, մարդ-կությունը ձգտում է հնարավորինս մեղմացնել դրա արդյունքում հասցվող վնասները, պաշտպանել մարդուն, սահմանափակել նրա տառապանքները, այսինքն՝ դրսևորել մարդասիրական վերաբերմունք: Այս նպատակով վեր-ջին երեք հարյուրամյակներում միջազգային հանրությունն ընդունել է մի շարք միջազգային-իրավական նորմեր, որոնք ուղղված են՝

- ռազմական գործողություններ վարելու միջոցներն ու մեթոդները սահմանափակելուն,
- պատերազմող կողմերին պարտադրելու՝ խնայելու այն անձանց, ովքեր չեն մասնակցել կամ այլևս չեն մասնակցում ռազմական գոր-ծողություններին[2]:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի անդամ, իրավագետ Ժան Պիկտեի առաջարկով միջազգային-իրավական բոլոր այն դրույթները, որոնք ապա-հովում են մարդ-անհատի նկատմամբ հարգանքը և ինքնադրսևորման նրա հնարավորությունը, անվանվել են «միջազգային մարդասիրական իրա-վունք»: Այսպիսով, այս իրավունքի հիմնական խնդիրն է կարգավորել ռազ-մական գործողությունները, մեղմացնել պատերազմողների կողմից պատ-ճառվող դժբախտություններն ու զրկանքները[3]:

Ռազմական գործողությունների կարգավորման, պատերազմի զոհերի պաշտպանության առանձին կանոններ ու սկզբունքներ սկսել են ձևավոր-վել ավելի վաղ ժամանակներում: Այս գործընթացին իր ուրույն մասնակ-ցությունն է ունեցել նաև հայ իրավական միտքը՝ իրավական հուշարձան-ներում զետեղելով պատերազմական գործողությունները կարգավորող նորմեր: Քննարկվող հարցի շրջանակներում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հայոց առաջին գրավոր սահմանադրության նախագիծը՝ «Որոգայթ փառաց»-ը, որի հեղինակն էր 18-րդ դարի ազգային-ազատա-գրական շարժման գործիչ, հայ լուսավորական գաղափարախոսության հիմնադիր, սահմանադրական պետականության գաղափարակիր Շահամիր Շահամիրյանը:

Միջազգային մարդասիրական իրավունքը, որպես գրավոր իրավունք, սկիզբ է առել 1864թ. Ժնևի առաջին պայմանագրերից[4] ու իր հետագա զար-գացումն է ստացել Հաագայի և Ժնևի հայտնի կոնվենցիաներում: Այսպես՝ ռազմական գործողությունները կանոնակարգող միջազգային իրավունքի նորմերը էապես կոդիֆիկացվել են 1899 և 1907 թվականներին Հաագայի

№ 42 (116), էջ 4:

1 https://www.irinnews.org/maps-and-graphics/2017/04/04/updated-mapped-world-war

2 Տես Հանս Պետեր Գասեր Միջազգային մարդասիրական իրավունք: Ներածություն: Հրատարակված է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից, Երևան 2008, էջ 3:

3 Տես Жан Пикте «Развитие и принципы международного гуманитарного права», М., Межд. Комитет Красного Креста, 1993, էջ 6:

4 Տես նույն տեղում, էջ 7:

խաղաղության երկու կոֆերանսների արդյունքում, իսկ պատերազմի զոհերի պաշտպանության վերաբերյալ չորս կոնվենցիաները՝ 1949թ-ին Ժնևում, որոնք 1977թ-ին ընդունված կից երկու լրացուցիչ արձանագրություններով մարդասիրական իրավունքին հնարավորություն են տվել հաստատվելու «երրորդ աշխարհում[1]»:

Գտնվելով եվրոպական առաջադեմ մտածողների գաղափարների ազդեցության ներքո՝ Շ.Շահամիրյանը «Որոգայթ փառաց»-ում մշակեց ուրույն իրավաքաղաքական հայեցակարգ: Նա իր տեսությունը կառուցեց՝ հիմնվելով բնական իրավունքի[2] և հասարակական դաշինքի գաղափարների վրա: Ըստ նրա՝ Աստծո ստեղծած կատարելությունը մարդն է, որն իր էությամբ ծնվում է հավասար ու ազատ, և ոչ ոք չի կարող իր կամքով և հաճույությամբ իշխել նրա վրա, հրամայել նրա բնությանը, սպանել կամ ստրկացնել նրան[3]: Այստեղից էլ այն սկզբունքը, ըստ որի գրավոր օրենքները, որոնցով ղեկավարվում են մարդիկ, պետք է հիմնվեն բնական իրավունքի վրա, համապատասխանեն մարդու բնությանն ու բանականությանը: Օրենքները պետք է ապահովեն մարդու ազատությունն ու անվտանգությունը, հավասարությունն ու գործողությունների ազատությունը, մտքի, խոսքի և դավանանքի ազատությունը, ինչպես նաև մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը[4]: Հետևաբար բնական իրավունքը և գործող գրավոր օրենքները սերտորեն շաղկապված են միմյանց և չեն կարող հակադրվել, ավելին՝ ըստ մեզ դրական իրավունքի նորմերը բնական իրավունքի տրամաբանական շարունակությունն են հասարակության մեջ:

Իրավաբմբռնման այս դիրքերից էլ կառուցված են Շահամիր Շահամիրյանի սահմանադրական հանրապետություն ստեղծելու նախագծի իրավական նորմերը, որոնք էլ իրենց հերթին կոչված էին ապագայում կարգավորել Հայկական պետության գործառնությունը:

Հանդես գալով բնական իրավունքի դիրքերից՝ Շահամիրյանի նպատակն էր պաշտպանել մարդուն անկախ նրանից՝ կին է, թե՞ տղամարդ, հա՞յ է, թե այլազգի, քրիստոնյա է, թե այլադավան, ծնվել է Հայաստանում, թե՞ օտար երկրում[5]: Ըստ հեղինակի՝ սկզբունքորեն մարդն ունի պաշտպանության անհրաժեշտություն ցանկացած իրավիճակներում: Այդ իսկ պատճառով նրա իրավունքները պետք է պաշտպանվեն ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմական գործողությունների ժամանակ:

Քննարկվող իրավական ակտի հեղինակի առաջ քաշած սկզբունքները կարևոր նշանակություն ունեին ռազմական գործողությունների ընթացքում «շարքից դուրս եկած» զինվորականների պաշտպանության համար, ինչ-

1 Տե՛ս A. Cassese. The New Humanitarian Law of Armed Conflict, Naples, 1979:
2 Շահամիրյանը դասվում է այն մտածողների շարքին, ովքեր նույնացնում են բնական իրավունքը և աստվածային իրավունքը: Այդ մասին ավելի մանրամասն տես Միրումյան Կ.Ա. Քաղաքական ուսմունքների պատմություն: Ուս. ձեռնարկ բուհերի համար/Խմբ. Վ.Ս. Թումանյան.-Եր.: Զանգակ-97, էջ 446-447:
3 Տե՛ս «Որոգայթ փառաց», Թիֆլիս, 1913, էջեր 19, 20, 21, 25, 102:
4 Տե՛ս նույն տեղում, էջեր 105-106:
5 Տե՛ս նույն տեղում, էջեր 142-143:

պես նաև կոչված էին խնայել ռազմական գործողություններին չմասնակցող անձանց: Այս առումով միջազգային ընդհարումների կարգավորմանը վերաբերող «Որոգայթ փառաց»-ի նորմերը համահունչ են Միջազգային մարդասիրական իրավունքի մի շարք դրույթներին:

Այսպես՝ պատերազմական գործողությունների ընթանցքում պահպանվող առաջին և ամենակարևոր սկզբունքն էր գերի հանձնված թշնամու կյանքի իրավունքը: Այդ մասին է վկայում ՅԺԸ հոդվածը, համաձայն որի հայ զինվորականին կամ հոգևորականին հանդիպելիս զենքը վայր դնող և գերի հանձնվող թշնամին չի կարող սպանվել:

Եթե զուգահեռներ անցկացնենք արդի Միջազգային մարդասիրական իրավունքի և Շ.Շահամիրյանի առաջարկած դրույթների միջև, ապա ակնհայտ կդառնան որոշ նմանություններ: Այսպես, ՄՄԻ կարևոր սկզբունքներից է այն, որ գերի հանձնված թշնամին ունի կյանքի իրավունք[1]:

Ավելին, ՅԺԵ հոդվածը արգելում էր վաճառել գերիներին՝ անկախ նրանից, թե նրանք քրիստոնյա՞ են թե հեթանոս (այսինքն՝ այլադավան): Վերջիններիս հետ անհրաժեշտ էր վարվել «մեղմ և հանդորը պահեսցի մինչև՝ ի ժամանակի խաղաղության», իսկ ՆՁԸ հոդվածը պատասխանատվություն՝ մահապատիժ է նախատեսում անմեղ գերուն սպանելու համար: Գերիները կարող են ենթարկվել պատասխանատվության, այսինքն՝ մահապատժի միայն այն դեպքում, երբ սուրը ձեռքին դեմ դուրս կգան Հայոց երկրին կամ կդիմեն փախուստի:

Վերոհիշյալ հոդվածների վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել ևս մեկ սկզբունք, որի իմաստը կարելի է արտահայտել «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» 1949թ. Ժնևի 3-րդ համաձայնագրի 13-րդ հոդվածի առաջին նախադասությամբ. «Ռազմագերիների հետ պետք է մշտապես վարվել մարդասիրաբար»:

Շահամիրյանը հնարավոր է համարում գերիների փոխանակումը: Ըստ ՅԺԵ հոդվածի՝ եթե թշնամու ձեռքերում կան հայ գերիներ, ապա անհրաժեշտ է արժանի կերպով ստիպելով թշնամուն՝ փոխանակել մեր բոլոր գերիներին խաղաղ բանակցությունների միջոցով: Մեկ այլ հոդվածով (ՃԼԸ) հեղինակը պարտավորեցնում է իշխանություններին («Տանն Հայոց») փրկել և հայրենիք վերադարձնել գերի ընկած Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու: Հետաքրքրական է այն փաստը, որ հեղինակը գերիներին պահելու հետ կապված ամենամյա ծախսերի հոգսը՝ «ծախս կերակրոյ, զգեստի, դարմանի և այլն», դնում է թշնամի պետության վրա: Բայց եթե պետությունը խնայի իր միջոցները և հրաժարվի հոգալ իր գերիների ծախսերը, վերջիններս ստիպված են աշխատելու և կատարելու Հայաստանին անհրաժեշտ աշխատանքներ (հոդվ. ՅԺԷ):

Շահամիրյանը հնարավոր է համարում իշխանների և հոգևորականների համար գերի ընկնելու դեպքում, տալով երդում և ստորագրություն, ձեռք

1 Տե՛ս Жан Пикте «Развитие и принципы международного гуманитарного права», М., Межд. Комитет Красного Креста, 1993, էջ 72:

բերել լրիվ կամ մասնակի ազատություն: Սակայն վերջիններս պարտավորվում էին ձեռք չբարձրացնել Հայոց զորքի դեմ, իսկ պահանջի դեպքում անմիջապես ներկայանալ:

Ըստ «Որոգայթ փառաց»-ի նորմերի՝ պատերազմի ավարտից հետո գերիները, համաձայն խաղաղության դաշնագրի պետք է ազատ արձակվեն: Նմանատիպ մոտեցում է պարունակում «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» 1949թ. Ժնևի համաձայնագրի 118-րդ հոդվածի առաջին կետը, որտեղ ասված է. «Ռազմագերիներն ազատվում և հայրենադարձվում են անմիջապես ռազմական գործողությունները դադարեցվելուց հետո»:

«Որոգայթ փառաց»-ի ամրագրած հաջորդ սկզբունքն է խտրականության արգելումը, մարդկանց ազատությունն ու իրավահավասարությունն անկախ սեռից, հավատքից և դավանանքից: Բացառելով դավանաբանական խնդիրների հետ կապված խտրականությունները՝ Շահամիրյանը նշում է, որ չի կարելի գերել կնոջը. նրա հետ անհրաժեշտ է վարվել հարգալից. «Մի երբէք գերեսցի էգա. ի բնութենէ մարդոյ ոչ քրիստոնէի և ոչ հեթանոսի գերի» (հոդվ. ՅԺԹ): Թշմանու կանայք և դուստրերը ունեն հատուկ պաշտպանության անհրաժեշտություն: Չի կարելի հետևել բարբարոսական օրենքներին, այլ անհրաժեշտ է ցուցաբերել հարգանք ու պատիվ: Խտրականության արգելումը 1949 թ. Ժնևյան համաձայնագրերի կարևորագույն սկզբունքներից է[1]:

Աշխատությունում կան նաև նորմեր, որոնք վերաբերում են պատերազմ վարելու իրավունքին: Գնահատելով ռազմական գործողությունները բնական իրավունքի տեսության դիրքերից՝ Շահամիրյանը տարբերակում է պատերազմողների՝ «զինվորներին» և խաղաղ բնակչությանը՝ «հասարակ ժողովրդին»: Սկզբունքն ուներ կարևոր նշանակություն այն իմաստով, որ մինչ այդ պատերազմող կողմերը տարբերություն չէին դնում պետության զորքի և խաղաղ բնակչության միջև՝ անխնա կոտորելով վերջիններիս: Եվրոպայում կոմբատանտների հասկացություններն առաջ եկան ֆրանսիական բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո:

«Հասարակ ժողովուրդ» ասելով՝ հեղինակը ի նկատի ուներ հակառակորդ պետության կողմից գրավված տարածքների բնակչությանը, որը զինվոր չէ («ոչ իցէ զինուոր»), զենք չի վերցնում («ոչ առնե զէն») և հնազանդվում է «առանց ընդդիմամարտության» (հոդվ. ՅՁԷ): Գրավված տարածքների ժողովուրդը չի կարող ենթարկվել վատ վերաբերմունքի կամ գերվել: Նրանք պահպանում են իրենց ազատությունը և սեփականությունը, իսկ հարկերն ու տուրքերը, որ վճարում էին նախկին իշխանություններին, այժմ պետք է վճարեն հայոց պետությանը: Եթե զորքը հեռանում է

1 Օրինակ՝ «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» 1949թ. Ժնևի համաձայնագրի 14-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Կանանց նկատմամբ հարկ է վերաբերվել նրանց սեռին վայել ամենայն հարգանքով, և նրանց հետ պետք է բոլոր դեպքերում վարվել ոչ ավելի վատ, քան տղամարդկանց հետ», իսկ 16-րդ հոդվածն ընգծում է. «...Կոնվենցիայի՝ կոչմանը և սեռին վերաբերող դրույթների հաշվառմամբ, գերության մեջ պահող տերությունը պետք է բոլոր ռազմագերիների հետ վարվի միատեսակ, առանց որևէ խտրականության ռասայի, ազգության, դավանանքի, քաղաքական համոզմունքների և բոլոր մյուս պատճառներով, որոնք հիմնվում են համանման չափանիշների վրա...»:

գրավված տարածքից, իրավունք չունի թալանել, գերել կամ տեղահանել բնակչությանը: Նույն ձևով պարտավոր են վարվել ժողովրդի հետ հայկական հողերը զավթող հակառակորդները: Հակառակ դեպքում հեղինակը պահանջում է հատուցանել ժողովրդին հասցրած վնասները: Վերը շարադրված դրույթները համահունչ են պատերազմի իրավունքին վերաբերող այն սկզբունքին, որը սահմանում է՝ «ընդհարման մեջ գտնվող կողմերը մշտապես պետք է տարբերակեն քաղաքացիական բնակչությունը և մարտիկներին, որպեսզի խնայեն բնակչությունը և քաղաքացիական օբյեկտները»[1]:

«Որոգայթ փառաց»-ի նորմերը արգելում են ավերել գրավված տարածքների բնակիչների բնակավայրերը՝ («մի աւերեսցի տուն և բնակութիւն և շեն հասարակ ժողովրդոց»): Անհրաժեշտության դեպքում պատերազմի հաջող ընթացքն ապահովելու համար կարելի է ավերել միայն «պարիսպն և բուրջն ամրոցաց և բերթօրէից և տուն վառյօդի և ջարախանայի, և բնակութիւն զինուորաց» (հոդվ.ՅՁԹ): Այսպիսով, տարբերություն է դրվում նաև ռազմական օբյեկտների և խաղաղ բնակչության շինությունների միջև, արգելելով ոչնչացնել վերջիններիս տները: Այս հարցի վերաբերյալ 1977թ.՝ առաջին լրացուցիչ արձանագրության 48-րդ հոդվածը սահմանում է. «... ընդհարման մեջ գտնվող կողմերը մշտապես պետք է տարբերակեն քաղաքացիական բնակչությանը և մարտիկներին, ինչպես նաև՝ քաղաքացիական օբյեկտները՝ ռազմական օբյեկտներից և համապատասխանաբար իրենց գործողություններն ուղղեն միայն ռազմական օբյեկտների դեմ»[2]:

Անձի ազատության և մասնավոր սեփականության պաշտպանության նպատակով հեղինակը սահմանում է հետևյալ դրույթները.

1. Քաղաքի կամ ամրոցի շրջափակման դեպքում յուրաքանչյուր բնակիչ, լինի դա զինվոր, թե հասարակ բնակիչ, շրջապատման դեպքում իրավունք ունի 15 օրվա ընթացքում անձամբ իր ընտանիքով և ունեցվածքով լքել քաղաքը, եթե վճարի ունեցվածքի 1/10 մասը: Այս դեպքում անձը մնում է ազատ և պատերազմի ավարտից հետո իրավունք ունի վերադառնալ իր հայրենիքն ընտանիքի և ունեցվածքի հետ (հոդվ. ՅԻԳ):

2. Վաճառականները, այս կամ այն նպատակով Հայաստանում գտնվող օտարերկրացիները պատերազմ սկսելու պահից իրավունք ունեն 45 օրվա ընթացքում հեռանալ Հայաստանից. պետությունն ապահովում է նրա անվտանգ տեղափոխումը: Նրա գույքն անձեռնմխելի է, այն ի պահ է հանձնվում իր երկրի ներկայացուցչին, իսկ պատերազմի ավարտից հետո գույքը կարող է դուրս բերվել երկրից: Եթե օտարերկրացին մնում է Հայաստանում, նա պահպանում է իր իրավական կարգավիճակը: Ժնևի 4-րդ համաձայնագրի 35-րդ հոդվածի 1-ին կետը նշում է, որ ցանկացած հովանավորվող

1 Տես Жан Пикте «Развитие и принципы международного гуманитарного права», М., Межд. Комитет Красного Креста, 1993, էջ 81: Նաև տես Հանս Պետեր Գասեր Միջազգային մարդասիրական իրավունք: Ներածություն: Հրատարակված է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից, Երևան 2008, էջ 75-82:
2 Տես Жан Пикте «Развитие и принципы международного гуманитарного права», М., Межд. Комитет Красного Креста, 1993, էջ 6:

անձ, որը կցանկանա թողնել տարածքը ընդհարման սկզբում կամ դրա ժամանակ, իրավունք կունենա այդ անելու այն դեպքում, եթե նրա մեկնումը չի հակասում երկրի պետական շահերին:

Շահամիրյանը նշում է, որ «յուրաքանչյուրն ունի իր ընտանիքի հետ տեղեկատվություն փոխանակելու իրավունք»: Եվ զինվորները, և՛ հասարակ ժողովուրդը իրավունք ունեն նամակագրական կապ պահպանել թշնամի երկրում գտնվող իրենց հարազատների հետ: Նամակը պետք է լինի բաց և զերծ պատերազմական բնույթի տեղեկություններից: Այն հանձնվում էր իր բանակի պատգամավորի միջոցով (հոդվ. ՑԻԲ):

Այսպիսով, վերը նշված նորմերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ Շ.Շահամիրյանը բնական իրավունքի իր հայեցակարգը կիրառելի է դարձնում դրական իրավունքի միջոցով՝ սահմանադրա-իրավական ամրագրում տալով այնպիսի դրույթների, ինչպիսիք են հավասարությունը, ազատությունը, անվտանգությունը, կյանքի իրավունքը, խտրականության արգելումը: Ընդ որում, այս մտածողը իրավունքի դիրքերից է կանոնակարգում ոչ միայն ներպետական, այլ նաև արտաքին հարաբերությունները, մասնավորապես՝ այլ երկրների հետ ռազմական գործողություններ վարելու հարցերը՝ դրանց հաղորդելով մարդասիրական բնույթ:

ЗАЩИТА ЖЕРТВ ВОЙНЫ В «ЗАПАДНЕ ЧЕСТОЛЮБИЯ» ШААМИРА ШААМИРЯНА

Нуне Джомардян
Руководитель Центра международных связей и исследований Международного университета Евразия, заместитель заведующего юридической кафедры

В статье проанализированы изложенные в «Западне честолюбия» нормы, направленные на защиту военнослужащих, выбывших из строя во время военных действий и призванных щадить не участвующих в военных конфликтах лиц. Выступая с концептуальных позиций естественного права, Ш.Шахамирян использует свою теорию для регулирования не только внутригосударственных, но и внешних отношений, в частности, для разрешения вопросов, связанных с ведением военных действий с другими странами.

Ключевые слова: естественное право, международное гуманитарное право, военнопленные, право на жизнь, запрет дискриминации, военнослужащие, мирное население.

PROTECTION OF WAR VICTIMS BASED ON SHAHAMIR SHAVAMIRYAN'S «SNARE GLORY»

Nune Jomardyan
Head of International Relations and Research Center, Deputy Head of Law Department at Eurasia International University

The article analyzes the norms set out in the «Snare Glory», which are aimed at the protection of the soldiers who have been abandoned during hostilities and are called to save those who are not taking part in the hostilities. Speaking from the conceptual aspects of natural law, Sh. Shahamiryan uses his theory to regulate not only the domestic, but also the external affairs, in particular with regards to military operations with other countries.

Key words: Natural Law, International Humanitarian Law, prisoners of war, right to life, prohibition of discrimination, soldiers, civilian.